

ՔՐԻՍՏՈՆԷՈՒԹԻՒՆ Ի ՀՆԴԻԿՍ

Յետ քսան և ութ ամի համբարձման Տեառն յերկինս՝ Թովմաս վերջին ՚ի հաւատացէլոց յարուժեան նորա՝ եղև առաջին աւետարանիչ արքայութեանն ՚ի հեռաւոր ծագս աշխարհին Հնդկաց : Սկսեալ ՚ի Պարսից և ՚ի Բակարոնէ քարոզեաց մինչեւ ՚ի Գաբան, և անդ ՚ի լեառն Մոնթ՝ եօթն մղնաւ հիւռի ՚ի Մագրոսոց հաստատեալ զաթոսն առ արեւական՝ ձեռնադրեաց ըզբազումս յաշակերտաց իւրոց և սրինաեաց զնոսա քարոզս աւետարանին ընդ ամենայն Հնդկաստան :

Թէպէտ և չիք առ ձեռն յիշատակութիւն սրբազան վաստակոց նորաստիայն և չիք և տարակոյս տարածելոց նորա զհաւատս երկնաւոր վարդապետին ընդ ամենայն ողորտս վիճակի իւրում : Զի ՚ի ժողովն Նիկիոյ՝ սրբումարեցաւ յերրորդ դարուն՝ Եր և եպիսկոպոսն Հնդկաց : Եւ յամին հանդերձելոյ՝ Փրուժնթոս ձեռնադրեցսւ Սթանասայ հայրապետ Հնդկաց : Ի մէջն վճիբորդ դարուն եկն դարձեալ այլ ոմն Թովմաս կրօնաւոր, ծրուակալ ՚ի կերպարանս վաճառականի, (զորումնք համարին գոլ Հայ ազգաւ), և զբազումս ՚ի նոցանէ դարձոց ՚ի հաւատն Քրիստոսի : Իսկ յաւուրս Յուստինոսի կայսեր, յորժամ հալածանք յարեան ընդդէմ Արեւելեան եկեղեցւոյ վասն ոչ ընդունելոց նորա զժողովն Քաղկեդոնի, նախ զՆերսէս հայկազունի առաքեաց սպարապետ, եւ ապա զՅելիսարիոս՝ առ ՚ի բռնութիւն անկ զնա յայն դաւանութիւն : Վասն որոց ժողովեալ Գեոսկորոսի Ասորոց հայրապետի զբազմութիւն յողգէ իւրմէ, և զեօթնեսին յաշակերտայն ձեռնադրեալ յերկրունս միախուով չու աբարին ՚ի ծովեղերս Արարիոյ, և նա

ւարկեալ անտի՝ եկին հասին ՚ի Քօչին՝ առ ծովեղերօքն Մալաբարոյ : Ուր շինեալ եկեղեցիս բազմացան յոյժ, եւ կան մինչև ցայսօր ժամանակի : — Հայր Ստեփաննոս աշխարհագիր գրէ զուրուցանէ, թէ « ՚ի ժամանակս թագաւորութեան Յունոց անհնարին նեղեալ ՚ի չարչարանաց և ՚ի տառապանաց՝ որովք նեղէին զնոսա Յոյնք՝ սակս Քաղկեդոնի ժողովոյն, հատուած մի ՚ի նուրուցանէ գնացին փախստական յաշխարհէն իւրեանց, և ճանապարհորդելով ընդ շաճս ՚ի զանազան աշխարհս, զկնի հասին ՚ի Քօչին » : Հատ. Գ. 104 : Եւ եթէ ճշմարտ իցէ զիւտ արձանին և գրութեան, զոր յիշատակէ անդ 261 և 262, թէ Օլթիէն ՚ի թաշինայ՝ այսինքն յԱսորոց՝ էած ՚ի Ձին զորէնս Քրիստոնէից յամի Փրիզին 636, ուրեմն խոստովանելի է, թէ Ասորիք ՚ի հալածանս անդ իւրեանց՝ առաւել լուսափայլեցին զհաւատս երկնաւոր վարդապետին՝ քան եթէ մնացեալ էին խաղաղութեամբ անգործ յաշխարհի իւրեանց : Ապա եկին ՚ի Բարելունէ Յովհաննէս և Գոնիէլ նետտրականք, և յետ նոցա այլք՝ մինչև յ1652, ուր Քրիզոր եպիսկոպոս Երուսաղէմի շրջեալ քարոզութեամբ ընդ աշխարհն Եթովպիոյ մինչ ՚ի Մուխա, եկն անդուտ ՚ի Քօչին, և հաստատեաց զամենեսին ՚ի դաւանութիւն Հայոց եւ Ասորոց : Սա գրեաց առ Մարզպանն Հայոց Մերուժէն, որ նստէր ՚ի Տիգրանակերտ, և նա առաքեաց ՚ի Հընգիկս զեպիսկոպոս մի Ասորի երկուքոսեպիսկոպոսօք, որոց եկեալ ՚ի Քօչին հովուեցին զեկեղեցին զամս հընգեոսասան : Ապա եկին Լատին քարոզիչք և զբազումս մտորեցուցին յազանգ պապապաշտութեան իւրեանց : Եամի տեառն 1744 հանդիպեցաւ նա յառաջնորդ Նոր Զուղայ Տ. Գէորգ


եպիսկոպոս . այլ անտեղեակ լեզուի նույն՝ ոչ ինչ կարաց առնել . վասն որոյ գնաց և յամին 1743 առաքեաց առ նոսա զԱհարոն վարդապետ զայրն բանիքուն : Եկն ընդ այն աւուրս եպիսկոպոս մի Ասորի , այլ քանզի այր արբեցող էր՝ ոչ ընկալաւ զնա ազգն : Վերստին գրեցին ՚ի Տիգրանակերտ առ ազգն իւրեանց , և նոքա առաքեցին առ նոսա եպիսկոպոս մի Շուքրօղլա անուն երկու քորեպիսկոպոսք : Յամին 1750 եղև հերձուած ՚ի միջի նոցա , ոմանք յարեցան ՚ի կողմն արքեպիսկոպոսի իւրեանց՝ և ոմանք ՚ի կողմին Ահարոն վարդապետի . որք այն պէս հովուեցին զնոսա՝ մինչեւ մեռաւ Ահարոն : Իսկ յետագայ առաջնորդաց Նոր Զուղայ անհոգացեալ փոխանորդել նմին զայլ հովիւ ՚ի վերայ հօտին՝ հալեցան ամենեքին և զսնգեցան յեկեղեցին ասորոց :

Այլ առաւել քան զնոսա մեծ արարին վաճառականք ազգի մերոյ ըզհաւատն Քրիստոսի ՚ի Հնդկաստան , որք բազմօք յառաջ քան զգալուստ եւրոպացւոց՝ շինեցին եկեղեցիս գրեալ թէ յամենայն վաճառաշահ քաղաքս Հնդկաց , և բարձր արարին զպաշտօն փառաց Ամենակալին ՚ի մէջ ամենայն հեթանոսաց :

Յետ նոցա զեղան Փորթուգալք և կրօնաւորք նոցա՝ որպէս Սպանիացւոցն ՚ի Մէքսիկոն , ՚ի ձախ բարձին ըզխաջ՝ և յաջ զսուսեր՝ բռնի ածել զնոսա ՚ի հաւատս իւրեանց : Զօրացան յետ նոցա Գանիք , Գաղղիացիք եւ Անգղիացիք , և զբազումս թէ ՚ի հաւատացելոյ և թէ յանհաւատից՝ որսացան եւ որսան ՚ի կողմն իւրեանց՝ առանց խորանաց :

Հատուած ինչ ազգիս իբրեւ երեսուն տանց ՚ի վաղեմի ժամանակաց հետէ բնակեալ ՚ի Քաթօլ՝ զամենայն

հոգեւորական պիտոյս իւր ընդունէր յառաջնորդէ Նոր Զուղայ՝ մինչև ցըկարապետ եպիսկոպոս : Ապա օտարոտի և տգէտ եպիսկոպոսոց փոխանորդեալ յաթոռ տեղւոյն , է որ անգիտութեամբ և է որ անհոգութեամբ զանց արարին առաքել առ նոսա մատակարարս Աստուածային շնորհաց : Եւ անինամ ժողովրդեանն զամս յորս վստ անկնունք պահելով զմանկունսն և անհաղորդ թաղելով զմեռեալս իւրեանց՝ սակաւին ամբողջ պահեցին զհաւատ հարց իւրեանց ցամ տեառն 1833 : Յորում յարշաւել զօրոց Անգղիացւոց ՚ի Քաթօլ յամբառնալ զՇահ-Սուլա յաթոռ իւր՝ պատահեալ քահանայի բանակին և հրաւիրեալ յեկեղեցին՝ մատուցեալ էին զառաւջեաւ նորա չափահաս մանկունս աւելի քան քսան թուով , մկրտել զնոսա : Գուցէ և դարձան իսկ ՚ի կրօնս նոցա : Զամա շիցեն արդեօք այսպիսի հովիւք , որք զանձինս և եթ արածեն , անփոյթ եղեալ զհօտիցն : (Պատմ . հին Հընդկաստանի Մետրոպ Ք . Թաղիադ . Քլ . 5 եր . 220-225 տպեալ ՚ի Կալկաթա) :



ԺԱՄԱՆԱԿԱԿՐԱԿԱՆՔ

Ռուսաց Հիւպատոսն , Պ . Իօզէֆու վիչ փոխուեցաւ եւ իւր անդն եկաւ նախորդ Հիւպատոսն , Պ . Կամեմլեկ կով , որ Յունաց Կիրիլոս Պատրիարքի ջերմ պաշտպանն էր և նոյն Պատրիարքի դահընկեցութենէն զկնի՝ Ռուսոյ Տէրութենէն Պետերուրդ կոչուեցաւ , և երբ Պրոկոպիոս անկաւ և անիշխանութիւնն զօրացաւ Յունաց Միւս բանութեան մէջ , վերստին նոյն Հիւպատոսն եկաւ , պատուով պսակեալ